ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 27-Ա

«06» մայիսի 2016 թվական

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇԻՎ ԲԱՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի, 66-րդ հոդվածի 3-րդ մասի, <<Հայաստանի Հանապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանապետության օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ մասի դրույթներով և հաշվի առնելով «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրի շրջանակներում իրականացվող՝ Մարալիկ քաղաքի Սուրբ Աստվածածին եկեղեցու մերձակա տարածքի մաքրման և բարեկարգման օժանդակ աշխատանքների կատարումը

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է.**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ քաղաքային համայնքում բացել արտաբյուջետային հաշիվ՝ <<Վարձատրվող հասարակական աշխատանքներ>> ծրագրով Մարալիկ քաղաքի Սուրբ Աստվածածին եկեղեցու մերձակա տարածքի մաքրման և բարեկարգման օժանդակ աշխատանքների կատարման նպատակով եկամուտներ ստանալու և ծախսեր իրականացնելու համար:

2. Դիմել Հայաստանի Հանրապետության պետական լիազորված մարմնին՝ համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ քաղաքային համայնքին արտաբյուջետային հաշիվ բացելու համար:

**Կողմ՝ 6** **Դեմ՝ 0** **Ձեռնպահ՝ 0**

1.ՄԱԿԱՐՅԱՆ ԲԱԲԿԵՆ

2. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

4. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍՈՍ

5. ՈՒՌՈՒՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ

6. ՍԱՀԱԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ

**ՔԱՂԱՔԱՊԵՏ՝** **ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ * ՀՀ ԿՈՄԻՏԵ * ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ք. Մարալիկ
06 մայիսի 2016թվական